

Գ. տեսանեմք ահա զբազում վերձանօղս եւ զմեծամեծս զի կառավարութեանց եւ դաստիարակելոյ կարօտանան, առաւել եւս՝ խրատուց: Ե. զի ընթերցուածոց դժուարաւ զիջանին լսողութիւնք քան թէ ընդունօղք քարոզութեան սիրելւոյ եւ բարեկամի: Զ. ըստ առաքելոյ պարտին ունկնդիր լինել եւ նախանձիլ բարւոյ, որ լաւն է ընտրութեամբ: Է. եղբայր յեղբօրէ օգնեալ քաղաք ամուր<sup>1)</sup> ոչ միայն գործով՝ այլ եւ բանիւք եւ մտօք յօժարականօք: Ը. եթէ հասարակացս ասել զայս արժան՝ քանի՛ցս ի մէջ ծնօղի եւ ծնեցելոյ<sup>2)</sup>, որպէս զօձն եւ զքարն առակեաց Տէրն ըստ խնդրոյն: Թ. զի այսու գթութեամբ կատարեսցին գունէ անձկութեան մեր եզրակացութիւնք, թէպէտ անյարմար եւ անմարթ կերպիւ ինչ: Ժ. զի Աստուած փառաւորեսցի ի գործս իւր, որ տնկեացն զքեզ այգի՝ զայցէ առ քեզ եւ զուարճացցի ի վերայ ողկուզաբեր բարունակացդ ըստ մարգարէին եւ ըստ սիրաթսփրիմին (?) սողմոնական, եւ ըստ Յոհաննու թէ Բերկընցի ի բարիք վարս ձեր, այլովքն: ԺԱ. զի ապենիազն եւ անկարօտն իցէ ամենայնիւ եւ ուրախանայ ի վարս մեր, քանի՛ցս առաւել մարդս տառապեալ, անմխիթարս մեծացեալ, վիրաւորս տարացեալ, խոցոտեալս անտիրացեալ, տնանկս թշուառացեալ, երեմիաս անձկացեալ կարդայ զսեւ ու զմուր, զմութն ու զխաւար սէվտան: Եւ տե՛ս զի հասարակաց է ասել զխղճութիւն նանրական կենցաղականութեան մարդկայնոյս, քանի՛ցս առաւել բանաւորաց եւ բազմագունակ զիտնոց եւ յոգնապատիկ խելահասից: Վասն որոյ պարտիս սիրել զիս որպէս զվեհագոյն վարժապետ. եւ զի՞նչ է սէրն քո՝ ինձ փառք եւ քեզ մեծ աշխատանք ի կլէմէդ Արարատեան մինչեւ յաշխարհ

1) ամեր.

2) ծնիցիլոյ.